



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

Երևան, Բաղրամյան 19

Հեռ 011-513-288

31.05.2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սիմոնյան

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածների՝ որպես օրենսդրական նախաձեռնություն, Ձեզ ենք ներկայացնում <<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքում լրացում կատարելու մասին>> օրենքների նախագծերի փաթեթը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են.

- ա) օրենքների նախագծերի փաթեթը (հիմնական զեկուցող՝ Նարեկ Զեյնալյան),
- բ) օրենքների նախագծերի ընդունման հիմնավորումը,
- գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը,
- դ) օրենքների նախագծերի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով օրենքների նախագծերի փաթեթը դնել շրջանառության մեջ:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ՝

ՆԱՐԵԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

ՀՈՒՍԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ կետով.

<<15) պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս օգտագործելու տեսալուսանկարահանող սարքեր՝ Կառավարության կողմից սահմանված կարգով: Պացիենտի առողջության և բարոյականության հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս, նրան կամ նրա օրինական ներկայացուցիչին տրամադրել տեղեկատվություն՝ տեսալուսանկարահանող սարքերի օգտագործման մասին:

Տեսալուսանկարահանման արդյունքում ստացված տվյալները կարող են փոխանցվել բացառապես պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության առկայության պայմանով: Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումն արգելվում է չափումների և միջամտությունների (մանիպուլյացիոն) սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում, սանհանգույցներում:>>:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքից բխող կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

## Օ Ր Ե Ն Ք Ը

### ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքի 47<sup>1</sup>.-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

<<Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը չափումների և միջամտությունների (մանիպուլյացիոն) սենյակներում հիվանդասենյակներում, լոգարաններում, սանհանգույցներում՝

առաջացնում է տուգանքի նշանակում, յուրաքանչյուր դեպքի համար՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:>>:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքում լրացում կատարելու մասին>> օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության

**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.** «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի ընդունման անհրաժեշտությունը բխում է բժշկական ծառայությունների տրամադրման ժամանակ բժշկական գաղտնիքի պահպանման, մարդու իրավունքների խախտումների հետ կապված խնդիրների բացառման անհրաժեշտությունից: Ներկայումս հիվանդանոցների մանիպուլյացիոն և հետազոտություններ անցկացնելու համար նախատեսված սենյակներում /տարածքներում/ տեղադրված են տեսալուսանկարահանող սարքեր: Այդ սարքերի տեղադրումը օրենքով արգելված չէ, սակայն այն առաջացնում է մարդու իրավունքների խախտումների հետ կապված խնդիրներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների պահպանմանը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի տեսանկյունից, իր նախադեպային որոշումներով արձանագրել է հետևյալը. «Անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության պահպանումը Կոնվենցիայի բոլոր պայմանավորվող կողմերի իրավական համակարգերի առանցքային սկզբունք է: Այն խիստ կարևոր է ոչ միայն պացիենտների անձնական կյանքը հարգելու, այլև առհասարակ բժշկի մասնագիտության և առողջապահական ծառայությունների նկատմամբ նրանց վստահությունը պահպանելու համար: Առանց նման պաշտպանության, բժշկական օգնության կարիք ունեցող անձինք կարող են մտավախություններ ունենալ պատշաճ բուժման նշանակման համար անհրաժեշտ անձնական և ինտիմ բնույթի տեղեկություններ ներկայացնելու և նույնիսկ բժշկին դիմելու հարցում: Այդպես նրանք կարող են վտանգել սեփական, իսկ վարակիչ հիվանդությունների դեպքում՝ նույնիսկ հանրային առողջությունը: Հետևաբար, ներպետական օրենսդրությամբ պետք է պատշաճ երաշխիքներ սահմանվեն, որպեսզի կանխվի առողջությանը վերաբերող անձնական տվյալների ցանկացած այնպիսի փոխանցում կամ բացահայտում, որը կարող է հակասել 8-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներին»<sup>1</sup>:

<sup>1</sup> [https://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_8\\_HYE.pdf](https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_8_HYE.pdf)

Պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից տարածքի տեսալուսանկարահումը ինքնին չի հանդիսանում Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ անձի տեսալուսանկարահանմամբ սահմանափակվում է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝ անհրաժեշտ է պարզել թե արդյոք սահմանափակումները «օրենքի համաձայն են» կամ «նախատեսված են օրենքով» և «անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում» Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նպատակներին հասնելու համար:

Այս առումով անհրաժեշտ է նկատել, որ ներկայումս առկա կարգավորումները հնարավորություն չեն տալիս լիարժեք գնահատել պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից տեսալուսանկարահանմամբ անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը, ինչը հնարավոր կլինի միայն սահմանված համապատասխան կարգի առկայության պարագայում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով մարդու իրավունքներին միջամտության բարձր աստիճանը՝ առաջարկում ենք օրենքով ամրագրել որոշ նվազագույն երաշխիքներ:

Այսպես, օրինակ՝ Լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով հստակեցնել, թե հիվանդանոցի որ տարածքների տեսալուսանկարահանման մասին է խոսքը գնում, քանի որ պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից տարբեր տարածքները պաշտպանության տարբեր աստիճան են ենթադրում, օրինակ՝ հիվանդանոցի հանրային տարածքներում անձը կարող է ունենալ տեսալուսանկարահանվելու ողջամիտ ակնկալիք, սակայն ավելի մասնավոր տարածքներում ինչպիսիք են օրինակ՝ մանիպուլյացիոն կամ հետազոտությունների համար նախատեսված սենյակներում կամ տարածքներում, հիվանդասենյակներում, լոգարաններում, սանհանգույցներում, անձն ունի իր մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի ողջամիտ ակնկալիք: Հաշվի առնելով վերոգրյալը՝ այսպիսի տարածքներում տեսալուսանկարահանումը կարող է հանգեցնել անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման:

Նախագծով առաջարկվող իրավակարգավորումներով՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին համապատասխանության ապահովման նպատակով, առաջարկում ենք օրենքով

նախատեսել պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից տեսալուսանկարահանման նվազագույն երաշխիքներ և պայմաններ:

Արգելելով տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը չափումների և միջամտությունների (մանիպուլյացիոն) սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում, սանհանգույցներում, հարկ ենք համարում նաև վարչական տուգանքի սահմանումը այդ տարածքներում տեսալուսանկարահանող սարքերի օգտագործման դեպքերի համար:

## **2. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի անդամների կողմից:

### **ՏԵՂԵԿԱՆՔ**

«ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀՀ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ԱՅԼ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի ընդունմամբ նոր օրենքների, ընդունման անհրաժեշտություն չի առաջանա:

**Հոդված 28. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտականությունները և պատասխանատվությունը**

1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են՝
  - 1) յուրաքանչյուր մարդու ցուցաբերել շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն՝ անկախ այդ օգնության դիմաց վարձատրությունը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների առկայությունից,
  - 2) ապահովել ցուցաբերվող բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի, մեթոդների, ծավալների համապատասխանությունը լիազոր մարմնի սահմանած չափանիշներին,
  - 3) յուրաքանչյուրին ապահովել նրան տրամադրվելիք բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի, մեթոդների, ծավալների, տրամադրման կարգի և պայմանների մասին տեղեկատվության տրամադրումը,
  - 4) յուրաքանչյուր մարդու պահանջով կամ նրա իրազեկ գրավոր համաձայնությամբ բժշկական օգնության համար այլ վճարողի տրամադրել անհրաժեշտ տվյալներ ցուցաբերած բժշկական օգնության և սպասարկման տեսակի, մեթոդի, ծավալների և քանակի ու դրան համարժեք կատարված ծախսերի մասին,
  - 5) պահպանել բժշկական գաղտնիքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
  - 6) ներկայացնել վիճակագրական և այլ տեղեկություններ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,
  - 7) ապահովել հոգատար և հարգալից վերաբերմունք պացիենտների նկատմամբ,
  - 8) ունենալ պաշտոնական ինտերնետային կայքէջ, որն առնվազն պետք է պարունակի տեղեկատվություն ծառայությունների, գնացուցակի, բուժանձնակազմի վերաբերյալ, ինչպես նաև ապահովի հետադարձ կապի հնարավորություն մասնագիտական ծառայություններ մատուցողների հետ: Սույն պարտականությունը չի տարածվում ռազմաբժշկական հաստատությունների, գյուղական համայնքների բժշկական ամբուլատորիա կամ առողջության կենտրոն հանդիսացող կամ ստոմատոլոգիական կաբինետի կամ մասնագիտական ոչ ավելի, քան երկու կաբինետի ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների նկատմամբ:
  - 9) ՇՄՋ հավաստագիր չունեցող անձի (բացառությամբ առաջին անգամ մասնագիտական գործունեություն իրականացնող՝ համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում և մասնագիտացում ունեցող անձի) հետ դադարեցնել աշխատանքային հարաբերությունները օրենսդրությամբ սահմանված կարգով,
  - 10) ապահովել ընթացակարգերով, պացիենտի վարման գործելակարգերով սահմանված պահանջների կատարումը,
  - 11) ստացիոնար պայմաններում պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելուց առաջ, իսկ անգիտակից կամ կյանքին սպառնացող վիճակում գտնվող պացիենտներին գիտակցության գալուց կամ կյանքին սպառնացող վտանգի վերացումից հետո իրազեկել պացիենտի իրավունքների (ներառյալ՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի) և պարտականությունների մասին: Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստացողներին կամ նրա օրինական ներկայացուցչին նրանց համար մատչելի ձևաչափով տրամադրվում է իրազեկման թերթիկ, իսկ վճարովի կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստացողների հետ կնքվում են վճարովի ծառայությունների մասին պայմանագրեր,
  - 12) պացիենտի իրավունքների և պարտականությունների իրազեկման թերթիկի, ինչպես նաև վճարովի ծառայությունների մասին պայմանագրի օրինակելի ձևերը և դրանց տրամադրման կարգը հաստատում է լիազոր մարմինը,
  - 13) Կառավարության սահմանած կարգով հաղորդում ներկայացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, եթե բժշկական հաստատություն տեղափոխված պացիենտն անգիտակից է կամ ունի գլխի վնասվածք կամ ուղեղի ցնցում կամ 3-րդ կամ 4-րդ աստիճանի այրվածք կամ կտրող-ծակող գործիքով առաջացրած վերք կամ թափանցող վերք կամ հրազենային վնասվածք կամ պոլիտրավմա կամ թունափորում, կամ պարզված տեղեկությունները հիմք են տալիս ենթադրելու, որ պացիենտի առողջությանը կամ կյանքին պատճառված վնասը բռնի կամ հակաօրինական գործողությունների կամ ինքնավնասման կամ

ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանք է, ինչպես նաև այն դեպքերում, երբ բժշկական հաստատություն է տեղափոխվել դիակ:

13.1) լիազոր մարմնի կողմից նորածնային և մայրական մահերի դեպքերի մշտադիտարկում իրականացնելու նպատակով լիազոր մարմնի սահմանած կարգով և ժամկետում տեղեկատվություն տրամադրել լիազոր մարմնին այդ դեպքերի մասին:

14) բժշկական գաղտնիք համարվող տվյալները, առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, տրամադրել քննիչին, դատախազին, դատարանին, Մարդու իրավունքների պաշտպանին՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված հարցումների հիման վրա:

15) պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս օգտագործելու տեսալուսանկարահանող սարքեր՝ Կառավարության կողմից սահմանված կարգով:  
Պացիենտի առողջության և բարոյականության հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս նրան կամ նրա օրինական ներկայացուցիչին տրամադրել տեղեկատվություն՝ տեսալուսանկարահանող սարքերի օգտագործման մասին:

Տեսալուսանկարահանման արդյունքում ստացված տվյալները կարող են փոխանցվել բացառապես պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության առկայության պայմանով: Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումն արգելվում է չափումների և միջամտությունների (մանիպուլյացիոն) սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում, սանհանգույցներում:

2. Իրենց մեղքով մարդու առողջությանը հասցրած վնասի համար, ինչպես նաև բժշկական գաղտնիք պարունակող տեղեկություններ փոխանցելու դեպքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, ապօրինի բժշկական գործունեությամբ զբաղվող անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

*(28-րդ հոդվածը փոփ. 09.06.22 ՀՕ-208-Ն, լրաց. 07.07.22 ՀՕ-291-Ն, 08.12.22 ՀՕ-537-Ն)  
(08.12.22 ՀՕ-537-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*

#### **Հոդված 47՝. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու կանոնները խախտելը**

Բժշկական փորձաքննության իրականացման կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում:

սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Ախտաբանաանատոմիական հերձումների և (կամ) հետազոտությունների անցկացումը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսվող պայմանների խախտմամբ հերձում և (կամ) հետազոտություն իրականացնողի նկատմամբ՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրի առկայության դեպքում դրա իրավունքն ունեցող անձից բուժսպասարկման համար վճարներ գանձելը կամ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրումը մերժելը՝



առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը չափումների և միջամտությունների (մանիպուլյացիոն) սենյակներում հիվանդասենյակներում, լոգարաններում, սանհանգույցներում՝

առաջացնում է տուգանքի նշանակում, յուրաքանչյուր դեպքի համար՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

*(47-ին հոդվածը լրաց. 08.04.08 ՀՕ-7-Ն, խմբ. 03.10.11 ՀՕ-259-Ն)*